

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ – 2018
11-ԴԴ ԴԱՍԱՐԱՆ
ՀԱՐՑԱՏՈՄՍ – տևողությունը՝ 150 րոպե

I. ԹԵՍՏՍՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (15 միավոր)
1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (9 միավոր)

- ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 6-րդ առաջադրանքներ: (0,5 X 6 = 3 միավոր)**
1. Որքա՞ն էր Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվն ըստ «Մարդուրյան տարեգրության».
 1) 150 հազար 2) 500 հազար 3) 550 հազար 4) 350 հազար
 2. Ե՞րբ է Ապլղարիպ Արծրունին նշանակվել Կիլիկիայի կառավարիչ (ստրատեգոս).
 1) 1082 թ. 2) 1042 թ. 3) 1072 թ. 4) 1065 թ.
 3. Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ ու՛մ անցավ Անիի Բագրատունիների «շահնշահ» տիտղոսը.
 1) Գագիկ Աբասյանին 3) Դավիթ Անհողինին
 2) Գագիկ Կյուրիկյանին 4) Սմբատ Աշոտյանին
 4. Որքա՞ն գորք է հավաքվել Արցախի մելիքների կողմից 1722 թ.
 1) 22000 2) 10000 3) 15000 4) 12000
 5. Ե՞րբ է Միսիթար սպարապետը թուրքերին պարտության մատնել Օրդուբադում.
 1) 1727 թ. 2) 1728 թ. 3) 1729 թ. 4) 1730 թ.
 6. Ե՞րբ է տեղի ունեցել Բաբշենի կռիվը.
 1) 1899 թ. հոկտեմբերի 20–ին 3) 1898 թ. նոյեմբերի 27–ին
 2) 1899 թ. նոյեմբերի 27–ին 4) 1898 թ. հոկտեմբերի 20–ին

բ. (1 X 3 = 3 միավոր)

1. Պատմիչների անունները դասավորել ըստ նրանց աշխատությունների ընդգրկած վերջին իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության. **(1 միավոր)**

- ա. Մովսես Խորենացի
 բ. Փավստոս Բուզանդ
 գ. Եղիշե
 դ. Ղևոնդ
 ե. Ագաթանգեղոս
 զ. Ղազար Փարպեցի

1	2	3	4	5	6

2. Կարդալ մեջբերված տեքստը և պատասխանել հարցերին: **(0,5 X 2 = 1 միավոր)**
«Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ և որդիներին ազատություն թողնեմ»:

Հայոց ո՞ր արքան է ասել վերոհիշյալ խոսքերը: Ո՞ր թագավորի դեմ էր նա ապստամբել:

3. Գահակալման տարիները համապատասխանեցնել Արտաշեսյան արքայի անվանը.

(1 միավոր)

- | | |
|----------------------|------------------------|
| 1. Արտավազդ III | ա. Ք. ա. 160–115 թթ. |
| 2. Տիգրան I | բ. Ք. ա. 189–160 թթ. |
| 3. Արտավազդ I | գ. Ք. ա. 2–Ք. հ. 1 թթ. |
| 4. Արտաշես I | դ. Ք. ա. 95–55 թթ. |
| 5. Տիգրան IV և Էրատո | ե. Ք. ա. 5–2 թթ. |
| | զ. Ք. ա. 115–95 թթ. |

1	2	3	4	5

գ. Գրել պատասխանները:

(3 միավոր)

1. Գտնել երեք ճիշտ պնդումները.

(1 միավոր)

- ա. Դավիթ Անհողինը ծրագրել էր բյուզանդացիներից ազատագրել Անին, սակայն վերահաս սելջուկյան արշավանքները ձախողեցին այդ ծրագրի իրագործումը:
- բ. Կախերթի իշխան Կվիրիկեի մահից հետո այդ իշխանությունն անցավ Դավիթ Անհողինի որդուն՝ Գագիկին, որն էլ դարձավ Կախերթի Կյուրիկյան հարստության նոր ճյուղի հիմնադիրը:
- գ. 1045 թ. Սյունյաց թագավոր Աշոտի մահից հետո գահն անցավ իր որդի Սմբատին, որին պատմիչներն անվանում են Սմբատ Աշոտյան:
- դ. Նվաճումների սկզբնական շրջանում մոնղոլները Հայոց եկեղեցու նկատմամբ մեղմ քաղաքականություն էին վարում, սակայն XII դ. վերջին, երբ մոնղոլներն ընդունեցին իսլամը, քրիստոնյաների նկատմամբ հալածանքները խիստ սաստկացրեցին:
- ե. Սելջուկյան ավերիչ արշավանքներին Տաշիր-Չորագետի և Վասպուրականի թագավորությունները դիմակայեցին և, օգտվելով սելջուկների թուլացումից, վերականգնեցին իրենց տիրույթները, իսկ Հայաստանի արևելքում պահպանվեց Խաչենի Հասան-Ջալալյանների իշխանությունը:
- զ. Դավիթ Շինարարի շուրջը համախմբվեցին մեծաթիվ հայ իշխաններ, և հայ գորահրամանատարների ներկայությունը վրացական արքունիքում ավելի բարձրացրեց Վրաստանի հեղինակությունը սելջուկների լծից ազատագրվել ցանկացող հայ ժողովրդի աչքում:
- է. Գագիկ Արծրունու խնդրանքով Սմբատ I-ը վերանայեց իր վճիռը և Նախճավան քաղաքը վերադարձրեց նրան, ինչի հետևանքով սրվեցին արքայի և Սյունյաց իշխանների հարաբերությունները:
- ը. Պատմական աղբյուրների համաձայն՝ XI դ. սկզբին Սյունիքն ուներ 8 քաղաք, 72 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան, իսկ բնակչության թիվը հասնում էր մոտ 1 միլիոնի:
- թ. Տաշիր-Չորագետի թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ Կյուրիկե I-ի՝ մոտ 60 տարի տևած կառավարման շրջանում, երբ թագավորության

տարածքը զգալիորեն ընդարձակվեց Թիֆլիսի և Գանձակի ամիրայությունների հաշվին:

--	--	--

2. Գտնել երեք սխալ պնդումները.

(1 միավոր)

- ա) 1877 թ. ամռանը թուրքերը, մեծ ուժեր կենտրոնացնելով, պաշարում են Բայազետի բերդը, և ավելի քան 23 հազար հոգուց բաղկացած թուրքական զորքերը կատաղի գրոհներ են գործում բերդի վրա, բայց գրավել չեն կարողանում:
- բ) 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում՝ Ալեքսանդրապոլ–Կարս ուղղությամբ, հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս-Մելիքովի հրամանատարությամբ գործող 52-հազարանոց Կովկասյան կորպուսն էր:
- գ) 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Մ. Լոռիս-Մելիքովի և Ա. Տեր-Ղուկասովի կողքին մարտնչում էին գեներալներ Հովհաննես Լազարևը, Բեհբուժ Շելկովնիկովը, Հակոբ Ալխազովը, Լևոն Մելիքովը, Ստեփան Քիշմիշևը և տարաստիճան բազմաթիվ զորահրամանատարներ ու զինվորականներ:
- դ) Մկրտիչ Խրիմյանի՝ 1869 թ. պատրիարք դառնալուց հետո «Ազգային սահմանադրությունը» գործադրվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:
- ե) XIX դ. կեսերին Ջեյթունն անվանապես ենթարկվում էր Մարաշի փաշայությանը, սակայն միայն իշխանություններին տարեկան որոշ քանակությամբ հարկ էր վճարում:
- զ) 1860 թ. մայիսի 24-ին սուլթանի կողմից վավերացված արևմտահայերի «Ազգային սահմանադրությունը» Արևմտյան Հայաստանի ու ամբողջ կայսրության հայ բնակչության կրթամշակութային կյանքը կարգավորող իրավական կարևոր փաստաթուղթ էր:
- է) Ըմբոստ Ջեյթուն լեռնագավառը իրեն ենթարկելու թուրքական կառավարության ջանքերն ավելի եռանդուն են դարձել, երբ Կովկասից ներգաղթած չերքեզները բնակեցվել են Մարաշի շրջակայքում:
- ը) 1860 թ. չերքեզների ավազակային ջոկատների ուղեկցությամբ թուրքական 50-հազարանոց բանակն արշավել է Ջեյթունի վրա և ջախջախիչ պարտություն կրել:
- թ) 1862 թ. Ազիզ փաշայի կազմակերպած գրոհը Ջեյթունի վրա ավարտվել է նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմել:

--	--	--

3. Գտնել երեք սխալ փաստարկները:

(1 միավոր)

- ա) 1827 թ. հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական զորքերը և հայ կամավորները գրոհով մտան Երևանի բերդ:
- բ) 1878 թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը Օսմանյան կայսրությունը հանդիսավորությամբ հռչակեց սահմանադրական հանրապետություն:

- զ) 1863 թ. մարտի 17-ին Կ.Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը վավերացրեց «Ազգային սահմանադրությունը»:
- դ) 1892 թ. Թիֆլիսում սկսվել է ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը՝ համագումարը:
- ե) 1891 թ. սուլթան Աբդուլ Համիդը քրդական անհնազանդ ջոկատներից ստեղծեց մոտ 50 հեծելազներ, որոնք կոչվեցին համիդիե:
- զ) 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կ.Պոլսում հնչակյանները կազմակերպեցին 4-հազարանոց խաղաղ ցույց:
- է) 1906 թ. օգոստոսի 17-ին Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ Էջմիածնում իր աշխատանքները սկսեց Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը:
- դ) 1914 թ. հոկտեմբերի 21-ին Նիկոլայ II-ը պաշտոնապես պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

--	--	--

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – բոլ առաջադրանքներ: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկվածներից ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել չորրորդը: (0,5 միավոր)

- 1) Մասանյան հեղաշրջումը և Պարթևական պետության անկումը
- 2) Տիգրանի գրավումը Տրայանոսի կողմից
- 3) Առաջին եռապետության ձևավորումը Հռոմում
- 4) Ալեքսանդր Մակեդոնացու մահը
- 5) Հռոմի կողմից Մակեդոնիային պատերազմ հայտարարելը

2. ԱՄՆ-ի ո՞ր նախագահն է սկիզբ դրել կառավարություն կազմելու միակուսակցական սկզբունքին: (0,5 միավոր)

- 1) Թոմաս Ջեֆերսոն
- 2) Ջորջ Վաշինգտոն
- 3) Աբրահամ Լինքոլն
- 4) Վուդրո Վիլսոն

3. Ե՞րբ է գումարվել Խաղաղության համաշխարհային առաջին համաժողովը Լոնդոնում: (0,5 միավոր)

- 1) 1843 թ.
- 2) 1863 թ.
- 3) 1891 թ.
- 4) 1894 թ.

4. Նոր ժամանակների ո՞ր իրադարձությունն է ստացել «Ժողովուրդների ճակատամարտ» անվանումը: (0,5 միավոր)

- 1) Սարիղամիշի ճակատամարտ
- 2) Վերդենի ճակատամարտ
- 3) Լայպցիգի ճակատամարտ
- 4) Վաթեռլոոյի ճակատամարտ

բ. (1 X 2 = 2 միավոր)

1. Համապատասխանեցնել պատմական իրադարձություններն ու դրանց տարեթվերը: (1 միավոր)

- | | |
|---|-----------------|
| 1) Ավստրո-Հունգարիայի կազմավորումը | ա) 1913 թ. |
| 2) Բուլղարիայի վերջնական անկախացումը | բ) 1878 թ. |
| 3) Մակեդոնիայի բաժանումը Սերբիայի, Հունաստանի և Բուլղարիայի միջև | գ) 1822 թ. |
| 4) Ռումինիա իշխանության ստեղծումը | դ) 1908 թ. |
| 5) Հունաստանի առաջին սահմանադրության հաստատումը Ազգային ժողովի կողմից | ե) 1867 թ. |
| | զ) 1859-1862 թ. |

1	2	3	4	5

2. Համապատասխանեցնել գործչի անունը իր ազգությանը.

(1 միավոր)

- | | |
|---------------|-------------------|
| 1) Սերբ | ա) Չարլզ Դիքենս |
| 2) ֆրանսիացի | բ) Էդգար Պո |
| 3) հունգարացի | գ) Էմիլ Զոլա |
| 4) անգլիացի | դ) Ֆրեդերիկ Շոպեն |
| 5) ամերիկացի | ե) Վուկ Կարաջիչ |
| | զ) Շանդոր Պետեֆի |

1	2	3	4	5

գ. (1 X 2 = 2 միավոր)

1. Բացատրությունը համապատասխանեցնել տերմինին: (1 միավոր)

- 1) Կոնցեսիա
- 2) Կոոպերացիա
- 3) Ձեռնարկատիրություն
- 4) Մոնոպոլիա
- 5) Ռեպարացիա

1	2	3	4	5

- ա) Միավորում, որն իր ձեռքն է վերցնում արտադրության այս կամ այն բնագավառը, որոշում արտադրության պայմանները և ապրանքի շուկայական գները: Դրանց ի հայտ գալով խախտվեց ազատ մրցակցությունը:
- բ) Որևէ պետության մեջ առանձնացված տարածք, որտեղ այդ պետության և օտարերկրյա գործարարներին թույլատրվում է ազատորեն ծավալել տնտեսական գործունեություն:

- զ) Ռազմական գործողությունների հետևանքով կրած վնասների և կորուստների փոխհատուցում, վճարումներ, որոնք կատարում է պարտություն կրած կողմը հաղթած պետությանը:
- ը) Արտադրության և աշխատանքի կազմակերպման ձև կամ կամավոր հիմունքներով ստեղծված ընկերություն, որը հիմնվում է խմբային սեփականության վրա, օգնում իր անդամներին արտադրություն, իրացում, սպառում իրականացնելու, վարկ ձեռք բերելու և այլ հարցերում:
- ե) Պայմանագիր, որով պետությանը պատկանող բնական հարստությունները, ձեռնարկությունները և տնտեսական այլ օբյեկտներ արտադրական գործունեության իրավունքով շահագործման են հանձնվում օտարերկրյա ընկերություններին:
- զ) Գործունեության տեսակ, երբ անհատը միջոցներ, կապիտալ է ներդնում որևէ գործի մեջ (արտադրություն, առևտուր և այլն)՝ շահույթ ստանալու նպատակով:

2. Իրադարձությունները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության: *(1 միավոր)*

- ա) Ռուսաստանի միանալը Անտանտին
- բ) Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումը
- գ) Քաղաքացիական պատերազմի ավարտը Ռուսաստանում
- դ) Բալկանյան երկրորդ պատերազմի սկիզբը
- ե) Պանամայի անջատումը Կոլումբիայից
- զ) Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի գավթումը Իտալիայի կողմից

1	2	3	4	5	6

II. ՊՍՏԱՍԽԱՆԻ ԱԶՍՏ ՇԱՐՄԱՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՐՄԱՆՔՆԵՐ (5 միավոր)

1. 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերը:

Ներկայացնել, թե ինչպես թուրք-անդրկովկասյան պատերազմը վերաճեց թուրք-հայկականի, ի՞նչ ընթացք ունեցավ այդ պատերազմը: Ներկայացնել հայ ժողովրդի մղած հայրենական պատերազմի նշանավոր հերոսամարտերը: Վերհանել և գնահատել մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը: **(2,5 միավոր)**

2. Արևմտյան ժողովրդավարության երկրները:

Ներկայացնել ազատական վարչակարգի բնորոշ հատկանիշները, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքը և արտաքին քաղաքականությունը 1920-ական–1930-ական թթ.: Գնահատե՛ք այդ երկրների վարած արտաքին քաղաքականությունը: **(2,5 միավոր)**

Է. Մինասյան

Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

06.03.2018 թ.